

**ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**  
**ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԱՇՏՈՆՅԱՆՆԵՐԻ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ**  
**ՍՏՈՒԳՄԱՆ (ՎԵԹԻՆԳԻ) ՄԱՍԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ»**  
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ**  
**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ**  
**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ**  
**ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ՀԱՆՐԱՅԻՆ**  
**ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ**  
**ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

Դատական իշխանության վեթինգի և առողջացման վերաբերյալ օրենսդրական նախագծերի փաթեթի (այսուհետ՝ նաև՝ «Նախագիծ») նպատակն է ապահովել դատական իշխանության առողջացումը մի շարք գործուն քայլերի միջոցով, որոնցից առավել կարևորներից են ցածր վստահություն ունեցող դատավորների և դրանց ներկայացուցչական մարմինների փոխվերարտադրելիության խափանումը, բացահայտ և քողարկված վեթինգի անցկացումը: Նոր Սահմանադրությունը հաջողությամբ ընդունվելու դեպքում Նախագիծը բազմաթիվ կարգավորումներ՝ վեթինգի իրականացման բուն գործընթացի, ապացուցողական չափանիշների և մի շարք այլ իրավադրույթների հետ կապված, հեշտությամբ կարող են ինկորպորացվել իսկական վեթինգ իրականացվող նորաստեղծ ԲԴԽ-ի կառուցակարգերում:

Վեթինգի սույն Նախագիծը մասնագիտական պիտանիության (գիտելիքների և հմտությունների) ստուգում չի ամրագրում: Փոխարենը՝ կատարվելու է դատավորների, ԲԴԽ անդամների, ՍԴ դատավորների (այսուհետ՝ դատական իշխանություն իրականացնող անձինք կամ դատավորներ) խոցելիության ստուգումը՝ (integrity vetting<sup>1</sup>) դատավորների մոտ նրանց «կարգավիճակի հետ անհամատեղելի խոցելիության առկայությունը» պարզելու նպատակով:

Պետք է հիշել, որ այս խոցելիության ստուգումը, այսինքն հենց **վեթինգը** անցումային արդարադատության բաղադրիչ է, հետևաբար, պետք է հնարավորինս ձեռնպահ մնալ դատավորների մասնագիտական պիտանիության և անձնական որակների, այդ թվում՝ համատեղելիության պահանջների բավարարման սովորական ընթացակարգերի

<sup>1</sup> «Integrity» բառը իրականում թարգմանվում է ոչ միայն որպես «բարեվարքություն», որն այնքան էլ ամբողջական չէ, այլ՝ անձի կամ անշունչ առարկայի, օրինակ՝ նավի պաշտպանիչ արտաքին շերտի ամբողջականություն, այն է՝ խոցելի, «թողող» տեղեր չունենալը և այդպիսով՝ արտաքին ռիսկերի հանդեպ անխոցելի լինելը:

«Vetting» բառը թարգմանվում և հասկացվում է որպես «ստուգում», քանի որ «զտումը» վեթինգի արդյունքներից մեկն է, մինչդեռ մեկ այլ արդյունք կարող է լինել ստուգման արդյունքում դրան ենթարկված դատավորին պաշտոնում վերահաստատելու որոշումը: «Integrity» բառի և «վեթինգ» բառի համադրված օգտագործման առավել ճշգրիտ տարբերակը «խոցելիության ստուգումն է»:

կրկնօրինակումից, որոնք, օրինակ կիրառվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) կողմից:

Այսինքն՝ քանի որ վեթինգի իրականացումը անցումային արդարադատության գործիք է, դրա իրականացումը պետք է հստակ առանձնացվի մշտապես կիրառվող պետության ներսում գործող «ավանդական» ընթացակարգերից: Վեթինգը դա որոշակի՝ անցումային շրջանով պայմանավորված ժամկետով սահմանափակված գործունեություն է: Նույնը վերաբերում է, ինչպես նշվեց, բարեվարքության ստուգման առկա՝ ԿԿՀ կողմից կիրառվող գործիքներին, թեև վեթինգի իրականացման՝ սույն Նախագծով ամրագրվող գնահատման չափանիշներն ու ապացուցողական չափորոշիչները հետագայում կարող են օգտագործվել նաև ԿԿՀ-ի կողմից:

Բացի այդ, Խոցելիության ստուգման ընթացքում դատավորների մասնագիտական որակավորման ստուգումից հրաժարվելը պայմանավորված է հետևյալ գործնական նկատառումներով՝

Օբյեկտիվորեն, ՀՀ դատավորների մեծ մասը իրականում տիրապետում են նյութական և դատավարական օրենսդրությանը և խնդիրը մեծամասամբ նրանց կողմից, Խոցելիության տարբեր ազդակներին/ռիսկերին արձագանքելով, այդ գիտելիքները չկիրառելու կամ դրանք ի չարը գործադրելու մեջ է.

Ստուգման տեսակետից, լուրջ խնդիր կարող է դառնալ վեթինգն իրականացնող կոլեգիալ մարմնի անդամների մոտ համարժեք և դատավորների համեմատ հավասար գիտելիքներ չունենալը.

Մասնագիտական որակավորման ստուգում իրականացնելուց հրաժարվելը առնվազն 2 անգամ կրճատելու է վեթինգի և առողջացման այլ քայլերի իրագործման համար պահանջվող ժամանակը.

Մասնագիտական որակավորման ստուգումը անհարկի երկարացնելու է գործընթացը և անհարկի առաջացնելու է/սրելու է դատավորների նշանակման հրամանագրերի, ապա և՛ նրանց կողմից/նրանց մասնակցությամբ կայացված ակտերի հիմնավորվածության կանխավարկածի հաղթահարման հարցը: Մասնավորապես, իրավական կայունության առումով, կարող է իրավաբանորեն հաստատվել, օրինակ, ոչ պատշաճ, այսինքն՝ գիտելիքներ չունեցող, հետևաբար՝ ժամանակին օրենքի խախտմամբ նշանակված առանձին դատավորների առկայությունը, ինչի դեպքում կասկածի տակ կորվի նրանց կողմից կայացված ակտերի օրինականության կանխավարկածը՝ խաթարելով իրավակարգի կայունությունը.

Ալբանական կիրառված մոդելում ձեռնհասության ստուգման արդյունքները հիմք էին Հանձնաժողովի կողմից դատավորի լիազորությունները կասեցնելու և Արդարադատության ակադեմիայում լրացուցիչ պարտադիր վերապատրաստում նշանակելու համար, ինչը մեր առաջարկների մեջ չի ներառվել՝ հաշվի առնելով դատական իշխանության արմատական վերափոխման և իրականում դատավորների բարեվարքության, այլ ոչ թե գիտելիքների հանդեպ հանրության ունեցած խորը անվստահությունն հաղթահարելու սույն Նախագծի նպատակը:

Դատախազների և քննիչների խոցելիության ստուգում նույնպես չի նախատեսվում, քանի որ դա նույնպես կարող է անհարկի ձգձգել գործընթացը: Բացի այդ, «մաքուր» դատավորների դեպքում «խոցելի» դատախազների և այլ իրավապահների առկայությամբ պայմանավորված վտանգները գրեթե չեզոքանում են:

Նման փորձագետների ներգրավման գաղափարը կիրառվել է Ալբանիայում, ինչպես նաև՝ Ուկրաինայում՝ Հակակոռուպցիոն դատարան ձևավորելիս: Գտնում ենք, որ այդ փորձը անհամատեղելի է երկրի ինքնիշխանության աստիճանի հետ:

## **Հնարավորինս կրճատել Վեթինգն իրականացնող մարմնի գործունեության ժամկետը<sup>2</sup>**

Վեթինգն իրականացնող մարմնի գործունեության ժամկետը, հետևելով Վենետիկի Հանձնաժողովի կարծիքին (այն է՝ Ալբանական օրենքի առթիվ տրված վերջնական զեկույցին), առաջարկվում է, որ լինի հնարավորինս կարճ՝ 2 տարի: Ալբանիայում ժամկետը շատ երկար էր, բայց այնտեղ դատավորների քանակը նույնպես գրեթե 4 անգամ շատ էր ՀՀ դատավորների ընդհանուր թվից:

**Նշված ժամկետներն իրատեսական են՝ Վեթինգի հանձնաժողովի որոշումները Վճռաբեկ պալատում բողոքարկելու ընթացակարգի բացակայության շնորհիվ, քանի որ այս Հանձնաժողովը տալու է եզրակացություններ, որոնց հիմքով դադարեցվելու են դատավորների, ՍԴ դատավորների ու ԲԴԽ անդամների լիազորությունները:** Ընդ որում, Օրենքը չի տարածվելու այն ուժի մեջ մտնելուց հետո թափուր պաշտոններում ընտրվող կամ նշանակվող հիշյալ պաշտոնյաների վրա:

Բացի այդ, խոցելիության ստուգման լայն բազա ամրագրելը, օրինակ՝ հարազատների քաղաքացիաիրավական գործարքների բացահայտումը վերջին 15 տարիների կտրվածքով, գույքային դրության խորացված ստուգումը, փորձաքննությունների նշանակման հնարավորությունը: (Ստուգման ենթարկվելու մասին դատավորի կողմից դիմում չներկայացնելը, ինչպես նաև ներկայացված դիմումը հետ վերցնելը դատավորի նկատմամբ Հանձնաժողովի բացասական եզրակացության հիմք է):

## **Վեթինգի արդյունքները**

Վեթինգն ավարտվում է հետևյալ երկու որոշումներից մեկի կայացմամբ՝

1. դատավորի կարգավիճակի հետ անհամատեղելի խոցելիության առկայության մասին եզրակացություն.

---

<sup>2</sup> Հետագայում, բոլոր դատավորների խոցելիության ստուգումից և վերջինիս արդյունքների հիման վրա դատական համակարգը մաքրելուց հետո, Վեթինգն իրականացնող մարմնի կողմից կիրառված ապացուցողական չափանիշները և չափորոշիչները, երաշխիքները և որոշումների կայացման գործընթացի տարրերը կարող են օգտագործվել ԲԴԽ-ի կողմից դատավորների համատեղելիության արդեն իսկ առկա պահանջները (ապաքաղաքականացվածություն, գործունեության որոշակի տեսակներով զբաղվելու սահմանափակումներ և այլն) խախտելու համար դատավորների լիազորությունները դադարեցնելու հարցը քննելիս:

2. դատավորի կարգավիճակի հետ անհամատեղելի խոցելիության բացակայության մասին եզրակացություն:

Սա կարևոր ձևակերպում է, քանի որ Սահմանադրության 164-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝

«Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Ղատական օրենսգրքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ»:

Հնարավորինս ընդլայնել վեթինգի ընթացքում ստուգման ենթակա ապացուցողական բազան, որպեսզի իրապես խոցելի դատավորները իրենք զերծ մնան վեթինգի ենթարկվելուց և հրաժարական տան:

Վեթինգի անցկացումը պետք է կատարվի բացառապես դատավորի դիմումի հիման վրա:

Վեթինգի անցկացման համար անձից պետք է պահանջվի այնքան շատ տեղեկատվություն, ընդ որում՝ նրա, նրա հարազատների կողմից վերջին, առաջարկվում է, 15 տարում կատարված գործարքների մասին, որ իրապես խոցելի դատավորները իրենք հրաժարվեն նման դիմում ներկայացնելուց: Նույն մոտեցումը պետք է ապահովվի, ինչպես նշվեց, նաև դատավորի կողմից իրեն վեթինգի ենթարկելու մասին դիմում ներկայացվելու դեպքում հետագայում՝ դիմումի ստուգման ընթացքում, այն հետ վերցնելու դեպքում՝ պետությանը թույլ տալով ազատվել խոցելի դատավորներից՝ փոխարենը թույլ տալով դատավորներին փրկել իրենց դեմքը:

Այստեղ՝ կիրառում ենք այն հանրահայտ սկզբունքը (waiver of a right through behaviour), որ եթե անձը, հստակ գիտակցելով իր վարքագծի, տվյալ դեպքում՝ դիմում չներկայացնելու հետևանքը, դրսևորում է այդ վարքագիծը, ապա նա համաձայն է դրա հետևանքների հետ, մասնավորապես, որ այդ վարքագիծը հանգեցնելու է Հանձնաժողովի բացասական եզրակացության:

**Եզրակացության, այլ ոչ՝Որոշման:**

Ամբողջ հարցը հենց նրանում է, որ վեթինգի որպես անցումային արդարադատության գործիքի լեգիտիմության ուժով, ինչը բխում է հեղափոխության բուն փաստից, *դատավորները չպետք է ունենան և հեղափոխությունից անմիջապես հետո չունենին էլ առանց ստուգում անցնելու պաշտոնավարումը շարունակելու ողջամիտ ակնկալիք:*

**Վեթինգի Հանձնաժողովի որոշումների իրավական կարգավիճակը**

Ղատավորներից, այդ թվում՝ ֆինանսական և անձնական ազդեցության նկատմամբ խոցելի դատավորներից ազատվելու համար կա երկու ռեժիմ՝ **լիազորությունների դադարում և լիազորությունների դադարեցում:** Առաջինը ենթադրում է, որ Ղատավորը կորցնում է իր կարգավիճակը փաստի ուժով, օրինակ՝ նրա հրաժարական տալը, 65 տարին լրանալը, նրա նկատմամբ մեղադրական դատավճռի ռեժիմի մեջ մտնելը և այլ հիմքեր, որոնք սահմանվում են Սահմանադրությամբ և Ղատական օրենսգրքով:

Իհարկե, իդեալական կլիներ Ղատական օրենսգրքում պարզապես նախատեսելը, որ «*ղատավորի լիազորությունները դադարում են Ղատավորների խոցելիության ստուգման հանձնաժողովի կողմից դատավորի մոտ իր կարգավիճակի հետ անհամատեղելի խոցելիության առկայության մասին*» որոշումն ուժի մեջ մտնելուց հետո»:

Սակայն, խնդիրն այստեղ այն է, որ Սահմանադրության 164-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝

*«Ղատավորի լիազորությունները դադարում են լիազորությունների ժամկետն ավարտվելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու, նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու կամ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցնելու, նրան անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրա հրաժարականի, մահվան դեպքերում»:*

Այսինքն՝ դատավորի լիազորությունների դադարման հիմքերը Սահմանադրությամբ սահմանված են **սպառիչ կերպով**: Հետևաբար, միակ միջոցը Վեթինգի հանձնաժողովի գործունեության արդյունքը որպես **դատավորների լիազորությունների դադարեցման** հիմք նախատեսելն է, ինչը ենթադրում է, որ Վեթինգի հանձնաժողովի գործունեության արդյունքը կարող է լինել միայն **եզրակացություն**, այլ ոչ թե՝ **որոշում**: Այսինքն՝ անխուսափելիորեն ԲԴԽ-ն է այն մարմինը, որ պետք է լուծի դատավորի կողմից համատեղելիության նոր և Սահմանադրությանը համահունչ սահմանվող այս պահանջի, մասնավորապես՝ կարգավիճակի հետ համատեղելի անխոցելիության պահանջները խախտելու հիմքով նրա լիազորությունները **դադարեցնելու** հարցը: (Տես Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը):

**Վեթինգի արդյունքը նախատեսել որպես դատավորի՝ իր կարգավիճակի հետ անհամատեղելի խոցելիության պահանջները խախտելու փաստ:**

Սա լիովին համապատասխանելու է Սահմանադրությանը, քանի որ 164-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ մասով, սահմանվում է, համապատասխանաբար, որ՝

**«6.Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Ղատական օրենսգրքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ:**

*... 9. Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները՝ Սահմանադրական դատարանի որոշմամբ, իսկ դատավորի լիազորությունները՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ, դադարեցվում են անհամատեղելիության պահանջները խախտելու, ... դեպքերում»:*

ՀՀ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ ԲԴԽ-ն լուծում է դատավորների լիազորությունների դադարեցման հարցը և անհամատեղելիության պահանջները խախտելը դատավորի լիազորությունների

դադարեցման հիմք է: Հնարավոր է փաստարկ, որ եթե հարցը լուծում է ԲԴԽ-ն, ապա նման անհամատեղելիության եզրակացություն կարող է տալ նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Սակայն այստեղ կարևոր է այն գործիքակազմը և ընթացակարգը, որով անցկացվում է համատեղելիության ստուգումը՝ Վեթինգի հանձնաժողովում, մասնավորապես՝ դատավորի համար արդար դատաքննության երաշխիքների ապահովումը, որի պարագայում Վեթինգի հանձնաժողովի որոշումները ձեռք են բերում հիմնավորվածության ավելի մեծ կանխավարկած: Փաստացի, ստեղծում ենք մի իրավիճակ, երբ Վեթինգի հանձնաժողովը դատարան չէ (քանի որ տալիս է եզրակացություն, այլ ոչ թե կայացնում է որոշում), իսկ ԲԴԽ-ն որը դատավորի լիազորությունների դադարեցման հարցով, ըստ Սահմանադրության, դատարան է, ստիպված է լինելու իր իրավասության ներքո հարցը քննելիս գործ ունենալ շատ ավելի ծանրակշիռ եզրակացության հետ:

**Դատական օրենսգրքով պետք է պարզապես նախատեսել, որ ելնելով Սահմանադրության 164-րդ հոդվածի 6-րդ մասի հնարավորությունից, որպես անհամատեղելիության լրացուցիչ պահանջ սահմանվում է դատավորի անխոցելիությունը (integrity), որն էլ հաստատվում է Վեթինգի հանձնաժողովի կողմից:**

**Վեթինգի ենթարկվող դատավորների համար ապահովել արդարացի դատաքննության վերաբերելի երաշխիքները**

Դատավորների համար պետք է ապահովել փաստերի վիճարկման, պաշտպանության իրավունքից բխող այլ երաշխիքներ, ինչպես նաև դատավարական սկզբունքներ:

Այդ երաշխիքների մեջ չի մտնում Վեթինգի հանձնաժողովի գործունեության արդյունքների բողոքարկումը, քանի որ այդ արդյունքներն ունեն ոչ թե դատական որոշման (ինչպես Ալբանիայի դեպքում էր), այլ՝ եզրակացության կարգավիճակ: Այդ եզրակացությունը՝ դատավորի համար բացասական լինելու դեպքում, հիմք է դառնալու ԲԴԽ-ի կողմից դատավորի լիազորությունների դադարեցման հարցը քննարկելու և լուծելու համար: Սահմանադրության համաձայն, դատավորի լիազորությունների դադարեցման և կարգապահական պատասխանատվության հարցերով ԲԴԽ-ն հանդես է գալիս որպես դատարան, ընդ որում՝ այս հարցերով ԲԴԽ-ի կողմից կայացված որոշումները վերջնական են և բողոքարկման ենթակա չեն՝ բացառությամբ նոր հանգամանքների ի հայտ գալու դեպքերի:

**Ազատվել դատավորների թափուր տեղերի լրացման համար թեկնածուների մշտական պակասից:**

Գուցե ամենակարևոր բաղադրիչներից է ինստիտուցիոնալ անցում ապահովելը՝ դատական իշխանության կոլապս թույլ չտալու համար (ինչի համար լրջորեն քննադատում են Ալբանիայի փորձը): Դատական օրենսգրքում և «Հայաստանի Հանրապետության Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում անհրաժեշտ է կատարել հետևյալ փոփոխությունները, սահմանելով հետևյալ դրույթներն ու իրականացնելով հետևյալ գործնական քայլերը՝

Ունկնդիրների քանակը որոշվում է ոչ թե ըստ դատավորների պաշտոններում թափուր տեղերի, այլ դատական իշխանության ռեզերվը ապագայի համար համալրելու նպատակով (2021թ. համար Դատական օրենսգրքով սահմանելով 100 դատավորի ռեզերվ): Դատավորների թեկնածուների ցուցակի համարումն իրականացնելուց հետո համալրման անհրաժեշտության մասին Բարձրագույն դատական խորհրդի հաջորդ որոշումները կայացվում են այն հաշվով, որպեսզի թեկնածուների ցուցակում գտնվող անձանց թիվը մշտապես գերազանցի առկա թափուր տեղերի քանակը առնվազն 40 տոկոսով:

Վերը նշված ռեզերվը չունի ժամկետային սահմանափակում, այսինքն՝ դատավորները նշանակվում են հաջորդաբար՝ ըստ առաջ եկող թափուր տեղերի:

Սա նաև կարևոր է դատավորների թափուր հաստիքների հրատապ համալրման, ինչպես նաև լիազորությունները կասեցված դատավորների փոխարեն կասեցման ժամանակահատվածով նշված ցուցակից դատավորներ նշանակելու համար: Կասեցման հիմքը վերանալուց հետո, եթե դատավորը դատապարտվում է ու նրա լիազորությունները դադարեցվում են, նշված փոխարինող դատավորները շարունակում են պաշտոնավարել այդ՝ լիազորությունները դադարեցված դատավորների պաշտոններում ԲԴԽ որոշմամբ:

Արդարացվելու դեպքում, փոխարինած դատավորները ձեռք են բերում ապագայում առաջացող թափուր պաշտոններում նշանակվելու նախապատվության իրավունք:

Ապահովել, որպեսզի որակավորման ստուգման գրավոր քննության փուլից ազատվեն, ի լրումն գիտական աստիճաններ ունեցող անձանց, նաև փաստաբանական և դատախազական աշխատանքի առնվազն 10 տարվա փորձ ունեցող անձինք: Սա դարձյալ անհրաժեշտություն է՝ շատ քիչ անձանց դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող մրցույթին մասնակցելու հայտ ներկայացնողների սակավության պատճառով: Սույն տեղեկանքը գրվելու պահի դրությամբ, օրինակ՝ քրեական մասնագիտացմամբ թեկնածու ընդհանրապես չկա: Բացի այդ, երկարատև փաստաբանական և/կամ դատախազական աշխատանքի փորձը դատավոր նշանակելիս հաշվի առնելը միանգամայն ընդունված է զարգացած ժողովրդավարության երկրներում (ԱՄՆ, Միացյալ Թագավորություն և այլն):

Միանգամից թեկնածուների մեծ միասնական ցուցակ ունենալը կարևոր է տարեց-տարի դատավոր նշանակվող անձանց ընդհանուր հայտարար հանդիսացող մասնագիտական շեմի բացակայության խնդիրը լուծելու տեսակետից: Շեմերի հարցը կարևոր սկզբունքային լուծում է ստանում մեր առաջարկած մոդելի շրջանակներում: Մասնավորապես՝ գործող կարգավորումների ուժով, անցողիկ շեմը որոշվում է ելնելով թափուր տեղեր/մասնակիցներ հարաբերակցությունից: Օրինակ, եթե թափուր է 10 տեղ, ապա հարցազրույցն անցկացվելու է 15 անձի հետ, այսինքն՝ 50 տոկոսով ավելի, ինչը գործող օրենքի պահանջն է: Ստացվում է, որ եթե այդ տարում գրավոր քննության համար դիմել է 50 անձ, ապա 35 անձի ոչ պիտանի լինելը որոշվում է արտաքին հանգամանքների ուժով՝ թափուր տեղերի առկայությամբ: Եթե այդ տարի թափուր լինել 4 տեղ, ապա պիտանի պետք է համարվեին 6-ը (գրավոր փուլի հաղթողներ), իսկ դիմած 50 թեկնածուից 44 անձ կհամարվեին, որ չեն համապատասխանում դատավորի

հարցազրույցի փուլին: Առաջարկվող մոդելում ապագա դատավորների կորպուսը կրում է ավելի միատարր բնույթ՝ մասնագիտական որակների առումով, իսկ մասնագիտական ու անձնական որակների արձանագրումը կախված է ոչ թե թափուր տեղերի քանակից, այլ միայն՝ թեկնածուների գիտելիքներից ու նախապես մեծ թվով անձանց համար սահմանված միասնական անցողիկ շեմից: